ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ 0105-2023

«13» 02 2023թ.

Ա/Հ Ալեքսան Դավիդի Միքայելյանին
(հասցե՝ ք.Երևան, Հաղթանակ 10 փող. Տուն 14)

Հարգելի՛ պարոն Միքայելյան,

Ձեզ է ուղարկվում, «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ-ի միջև 21.11.2022թ-ին կնքված N ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/22-1 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը:

Առդիր՝ 1 ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Դ.ՂՈՒԼՅԱՆ

*Կատարող՝ Օֆելյա Կիրակոսյան*

0023, ք. Երևան, Արշակունյաց պող. 23,
հեռ.՝ (010) 44 11 36, ֆաքս՝ (010) 58 15 74,
թեժ գիծ՝ (010) 30 00 11,
էլ. կայք՝ justexpert.am, էլ. փոստ՝ info@justexpert.am

## ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա

*«ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ-ի միջև 21.11.2022թ-ին կնքված N ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/22-1 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին*

**«10» ՓԵՏՐՎԱՐԻ 2023Թ.** **Ք. ԵՐԵՎԱՆ**

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Ալեքսան Դավիդի Միքայելյանի (այսուհետ՝ Վաճառող) միջև 21.11.2022թ. կնքվել է թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/22-1» ծածկագրով գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Գնորդի կողմից 22.12.2022թ. էլեկտրոնային եղանակով Վաճառողին ուղարկվել է համաձայնագրի նախագիծը և առաջարկվել 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Վաճառողի կողմից հաստատված համաձայնագիրը 2 օրինակից՝ կից գրությամբ, սակայն Վաճառողի կողմից՝ սահմանված ժամկետում Գնորդին դրանք չեն ներկայացվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ եթե Պայմանագիրը կնքվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, սակայն տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ հետագայում ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումն իրականացվում են համաձայնագիր կնքելու միջոցով: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա պատվիրատուի կողմից համաձայնագիր կնքվում է, եթե պայմանագիր կնքած անձի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է երաշխիքով կամ Ֆանխիկ փողով՝ հաշվի առնելով սույն կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, պայմանագրի կողմը համաձայնագիրը կնքում, իսկ ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումն ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Պայմանագրի 8.15-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: *Ընդ որում, վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ալեքսան Դավիդի Միքայելյանի միջև 21.11.2022թ. կնքված թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/22-1» ծածկագրով գնման պայմանագրի 8.15-րդ կետի պահանջները՝ և ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի «ժ» և ժա» ենթակետերով և ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1933-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 28-րդ կետի «թ» և 29-րդ կետի «թ» ենթակետերով՝

## ՈՐՈՇԵՑԻ

1. Միակողմանի ամբողջությամբ լուծել «ՀՀ փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Ալեքսան Միքաելյան Դավիդի» ԱՁ-ի միջև 21.11.2022թ-ին կնքված N ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-18/22-1 գնման պայմանագիրը:

2. Պայմանագրի լուծման մասին որոշումը հրապարակել www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ

Դ.ՂՈՒԼՅԱՆ